գիտութիւնն է, պարտի միշտ տուր վրայ խորհիլ և խօսիլ, արտաքին հովերու դէմ փակել իր զգայարանքները, ծուլութեան հողէն զերծ՝ արի և արթուն ըլլալ, գինովութեան դէմ հոգիով ու մարմնով զգաստ պահել ինքզինքը՝ Ի) Գիշերը հանգիստ է. որովհետև յոգնածը կը հանգչի և նոր ույժ առած կը գործէ. վարդապետն ալ մեղքերով յոգնածները կը հանգչեցնէ և բարիք գործելու ույժ կուտայ։ Լ) «Գիշերն արտաքոյ տեղի է և պակասութիւն լուսոյ. և ի ներքոյ էութիւն է օդոյ. այսպէս և վարդապետն պարտ է լինել արտաքոյ տեղւոյ, սեւաւորս եւ զծուծ հանդերձիւ եւ ի ներքոյ ուսանողացեալ լի՛ շնորհօք հոգւոյն, եւ մի՛ կոկեալ եւ փերեւեկեալ զարդուք» (Հմմտ. անդ, երես 170ա)։ Ռ) Որովհետև սկիզբն աւուր է՛ ի մէջ գիշերի, յորում կէտ արեգական սկսանի բարձրանալ ի վեր. և ի նմին ժամու տամք իշխանութիւն՝ ի յորում սկսանի լուսաւորել զմարդիկ» (Միւս պատճառները տե՛ս նոյն անդ)։

Տաթևացւոյ բացատրութիւններուն համեմատ, գաւազանի տուչութիւնը իսկապէս գիշերը պէտք է կատարել, մանաւանդ կէս գիշերին, որուն սկսուածը ճիշդ արդի գիտական կամ եւրոպական հաշուով կ'որոշէ Տաթևացին. — Որը կէս գիշերին կը սկսի։ Թէև ստոյգ է որ Մաշտոցի մէջ Գիշերային ժամերգութեան յօդուած է գաւազանի տուչութեան կանոնը, բայց առ հասարակ շատո՜նց գործուած է տասական ճշդութեամբ կատարումը իւրաքանչիւր ժամուն ժամերգութեան։ Այսուամենայնիւ, նկատի առնելով ժամանակի գործածութեան մասին արդի ըմբռնումները և այն մեծ փոփոխութիւնները՝ որոնք հետզհետէ ազդած են մարդկային բարքերուն վրայ, որոնցմէ զերծ չէր կրնար մնալ նոյնիսկ Եկեղեցին, պէտք է գոհ ըլլալ՝ եթէ գաւազանի տուչութիւնը Գիշերային ժամերգութեան յօդուած կատարուի իբր յարգանք գեղեցիկ աւանդութեան մը՝ որու նշանակութիւնը զարմանալ մութ կը մնայ Տաթևացւոյն «հնդկաստան իմն պատճառաբանութիւններէն ետքն ալ։

Արտատպուած Լոյս Ճառագայթերէն, 1908
(Շարունակելի՝ 12)

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԳԻԼԳԱՄԷՇԻ ԴԻՒՑԱԶՆԵՐԳՈՒԹԻՒՆԸ

*Ասուրական բնագիրը*

1. — Սիդուրին՝ գինե[տան աղախինը, որ կը բնակի ծովեզրը],
2. — (որ) կը բնակի [...].
3. — անոր համար կուժ մը շինեցին, անոր համար շինեցին [ոսկեղէն կառկառակա մը].
4. — ան ծածկուած է քօղով մը և [...].
5. — Գիլգամէշ կու գայ անոր մօտ և [...].
6. — զգեստաւորուած է մորթով [...].
7. — ան ունի աստուածներու միսը [իր մարմնին] մէջ,
8. — (բայց) վիշտ կայ [իր սրտին] մէջ.
9. — [իր] դէմքը [նման է] [մէկու մը], որ երկար ուղևորութիւն է կատարած.
10. — գինետան աղախինը կը դիտէ հեռուն.
11. — կ'ըսէ իր սրտին (և) [կը խօսի] (այս) խօսքերը.
12. — ինքն իրեն հետ [խորհրդակցելով]։
13. — «Անկասկած, այս (մարդը) մարդա[սպան] մըն է՞.
14. — ո՞ւր կը յառաջանայ ան [...]՞»։
15. — Երբ գինետան աղախինը զայն տեսաւ, գոցեց [իր դուռը].
16. — գոցեց իր դուռը, փակելով զայն [նիգով մը].
17. — բայց ինքը՝ Գիլգամէշ լսեց [ձայները],
18. — բարձրացուց իր սրա[ծայր ցուպը] և գետն[ղեց(՞) ...]։
19. — Գիլգամէշ [ըսաւ] անոր՝ [գինետան աղախնոյն].
20. — «Ո՞վ գինետան աղախին, ի՞նչ տեսար որ [գոցեցիր քու դուռը].
21. — որ գոցեցիր քու դուռը, [փակելով զայն նիգով մը].
22. — պիտի խորտակեմ [քու] դուռը [և փշ]րեմ [քու դուռը]!»։

Սիւնակին մնացեալը դէշ կերպով փըշրըւած է, բայց անոր մեծագոյն մասը կարելի է վերականգնել Sp. 299 բեկորով և այս տախտակի յաջորդական սիւնակներով։ Տես Schott, ZA, XLII, 1934.

digitised by A.R.A.R.@

***

1.— [Գիլգամէշ ըսաւ անոր՝ գինետան աղախնոյն].
2 — «[Ես Գիլգամէշն եմ, բռնեցի և սպաննեցի երկինքէն եկած ցուլը]։
3.— [սպաննեցի անտառի դէւը]
4.— [տապալեցի Խումբաբան, որ կ՚ապրէր] մայ[րիներու անտառ]ին [մէջ].
5.— [լեռնակիրճերու մէջ սպան]նեցի առիւծները։
6.— [Գինետան աղախինը ըս]աւ [իրեն] Գիլգամէշին.
7.— «[Եթէ դուն ես Գիլգամէշը], որ սպաննեց (անտառի) դէւը.
8.— [տապալեցիր Խում]բաբան, որ կ՚ապրէր մայրիներու անտառին մէջ.
9.— սպաննեցիր առիւծները լեռնա[կիր]ճերուն մէջ],
10.— [բռնեցիր և] սպաննեցիր երկինքէն իջած ցուլը.
11.— [ինչո՞ւ այտ]երդ [հիւծած են], դէմքդ վհատ է,
12.— [ինչո՞ւ սիրտդ այսքան տրտում է], դիմագիծդ [գալար]ուած է,
13.— [(ինչո՞ւ) վիշտ կայ] սրտիդ մէջ.
14.— դէմքդ նման է [անոր որ հեռաւոր ուղևորութիւն մըն է կատարած]
15.— [...] դէմքդ տաղուած է [ցուրտով և տաքով],
16.— [...] կը թափառիս արձակադաշտի վրայ»։
17.— [Գիլգամէշ ըսաւ անոր՝ գինետան աղախնոյն]
18.— «[Ո՞վ գինետան աղախին, ինչո՞ւ պիտի չհիւծէին իմ այտերը (և) իմ դէմքը չըլլար վհատ],
19.— [պիտի չտրտմէր իմ սիրտը (և) իմ դէմքը չգալարուէր],
20.— [վիշտ պիտի չըլլար իմ սրտին մէջ].
21.— [դէմքս պիտի չնմանէր անոր որ երկար ուղևորութիւն մըն է կատարած],
22.— [դէմքս չտաղուէր ցուրտէ և տաքէ],
23.— [ու չթափառէի ... արձակադաշտի վրայ].
24.— [իմ բարեկամս, իմ կրտսեր եղբայրը(?), որ որսաց արձակադաշտի ցիռը (և) յովազը տափաստանի],
25.— [Էնկիդուն՝ իմ բարեկամը, իմ կրտսեր եղբայրը(?), որ որսաց ցիռը արձակադաշտի (և) յովազը տափաստանի],
26.— [մենք որ նուաճեցինք բոլոր խոչընդոտները և բարձրացանք լեռները]։

## ՍԻՒՆԱԿ ԵՐԿՐՈՐԴ

1.— [Որ բռնեցինք և սպաննեցինք երկինքի ցուլը].
2.— [տապալեցինք Խումբաբան, որ կ՚ապրէր մայրիներու անտառին մէջ],
3.— [իմ բարեկամը, որուն կը սիրէի (այնքան) կաթողին կերպով. որ կրեց ինծի հետ բոլոր դրկանքները],
4.— [Էնկիդուն՝ իմ բարեկամը. որուն այնքան կաթողին (կերպով) կը սիրէի. որ կրեց ինծի հետ բոլոր զրկանքները],
5.— [մարդկութեան ճակատագիրը անոր վրայ հասաւ]!
6.— [վեց ցերեկ և եօթ գիշեր արտասուեցի անոր վրայ],
7.— [մինչև որ որդը ինկաւ անոր դէմքին վրայ].
8.— [վախցայ մահէն. ահա թէ ինչո՞ւ կը թափառիմ արձակադաշտի վրայ]. բարեկամիս պարագան [ծանրօրէն կը կշռէ վրաս].
9.— [այս պատճառով] կը թափառիմ [արձակադաշտի] վրայ. [հեռաւոր ուղղութիւններով].
11.— [ի՞նչպէս կրնամ լռ]ել? ի՞նչպէս կրնամ հանդարտիլ
12.— [իմ բարեկամը, զոր կը սիրէի] հողի [վերած]ուած է. Էնկիդուն՝ իմ բարեկամը. զոր կը սիրէի, հողի վերածուած է.
13.— [ես ալ իրեն պէս] պիտի չքնանա՞մ.
11.— [և չարթննամ] ցմիշտ։
15.— [Գիլգամէշ տակաւին] ըսաւ անոր՝ գինետան աղախնոյն.
16.— «[Հիմա], ո՜վ գինետան աղախին, ո՞ր է ուղին դէպի Ուտնապի[շտիմ]ը.
17.— [որո՞նք են] անոր ցուցանիշները, տուր ինծի, խնդրեմ, տուր ինծի անոր ցուցանիշները.
18.— եթէ կարելի է, պիտի կտրեմ ծովը.
19.— եթէ անկարելի է, պիտի թափառիմ արձակադաշտի վրայ»։
20.— Գինետան աղախինը ըսաւ անոր՝ Գիլգամէշին.

digitised by A.R.A.R.@

21.— «Գիլգամէշ, ոչ ոք տակաւին կտրած է (ծովը),
22 — և ով որ հին օրերէն մինչև հիմա հասած է, չէ կրցած կտրել ծովը.
23.— արիասիրտ Շամաշը կը կտրէ ծովը, ո՞վ, բացի Շամաշէն, կը կտրէ (զայն).
24.— դժուարին է անցքի վայրը (և) դժընդակագոյն՝ հոն տանող ճամբան.
25.— և անոր միջև են մահուան ջուրերը՝ որոնք կ'արգիլեն անոր մերձեցումը.
26.— ո՞ւր, Գիլգամէշ. պիտի կտրես ծովը.
27.— երբ հասնիս մահուան ջուրերը. ի՞նչ պիտի ընես.
28.— Գիլգամէշ, կայ Ուրշանաբին՝ մակուկավարը Ուտնափիշտիմի.
29.— անոր մօտն են Քարեղէն Առարկաները(87). անտառին մէջ կը ժողվէ ուռնու(88) ծիլեր.
30.— թող [ա]ն տեսնէ քու դէմքը.
31.— [եթէ կարե]լի է. անոր հետ կտրէ. եթէ անկարելի է. վերադարձիր».
32.— Երբ [Գիլգա]մէշ լսեց ասիկա
33.— [տապար ա]ռաւ իր [ձեռքը].
34.— [քաշեց դաշոյնը իր գօտիէն]. սպրդեցաւ (անտառին) մէջ և անոնց մօտ գնաց.
35.— [Նետի մը պէս(?) ին]կաւ անոնց միջև.
36.— (Մնացեալը չափազանց հատուածական՝ թարգմանութեան համար).

ՍԻՒՆԱԿ ԵՐՐՈՐԴ

1.— Ուրշանաբին անոր ըսաւ՝ Գի[լգամէշին].
2.— «Ինչո՞ւ քու այտերը հիւծած են [քու դէմքն է] ակն[կոր].
3.— քու սիրտն է (այնքան) տրտում, [քու դէմքն է (այնքան) գալարուն].
4.— (ինչո՞ւ) վիշտ կայ [քու սրտին] մէջ.
5.— [քու դէմքը նման է անոր] որ երկար ուղևորութիւն մըն է կատարած.
6.— [քու դէմքը տապ]առած ցուրտէն և տաքէն.
7.— [ինչո՞ւ ... կը թափա]ռիս [արձակադաշտի վրայ]»։
8.— [Գիլգամէշ] ըսաւ [անոր]՝ [Ուրշանաբի]ին.
9.— «[Ուրշանաբի, ինչո՞ւ պիտի չհիւծէին իմ այտ]երը. իմ դէմքը [չվհատէր],
10.— [սիր]տս [չտխրէր]. [դէմքս] չգալարուէր.
11.— վիշտ [չըլլար] [իմ սրտին] մէջ.
12.— [չնմանէր իմ] դէմ[քը անոր. որ երկար ուղևորութիւն մըն է կատարած],
13.— [դէմքս] չտապ[ուէր ցուրտէ և տաքէ].
14.— [և ... չթափառէի արձակադաշտի վրայ].
15.— [իմ բարեկամը, իմ կրտսեր եղբայրը(?). որ որսաց ցիռը տափաստանի (և) յովազը արձակադաշտի],
16.— [էնկիդուն. իմ բարեկամը, իմ կրտսեր եղբայրը(?). որ որսաց ցիռը տափաստանի (և) յովազը արձակադաշտի].
17.— [մենք որ նուաճեցինք բոլոր (դժուարութիւնները) և բարձրացանք լեռները].
18.— [բռնեցինք և սպաննեցինք երկնքի ցուլը].
19.— [տապալեցինք Խումբաբան, որ կ'ապրէր մայրիներու անտառին մէջ],
20.— բարեկամս. [զոր այնքան կը սիրէի կաթոգին կերպով. որ կրեց ինծի հետ բոլոր գրկանքները],
21.— Էնկ[իդուն՝ իմ բարեկամը, զոր այնքան կաթոգին կերպով կը սիրէի, որ կրեց ինծի հետ բոլոր գրկանքները],
22 — [մարդկութեան ճակատագիրը] հասաւ [անոր] վրայ.
23.— վեց ցերեկ [և եօթ գիշեր արտասուեցի անոր վրայ].
24.— մինչև [որ որդը ինկաւ դէմքէն].
25.— վախ[ցայ ... և մահէն վախցայ, ահա թէ ինչո՞ւ կը թափառիմ արձակադաշտի վրայ].
26.— [բարեկամիս] հար[ցը ծանր կը կշռէ վրաս].
27.— այս պատճառաւ [կը թափառ]իմ [արձակադաշտի վրայ. Էնկիդուի՝ բարեկամիս պարագան ծանրօրէն կը կշռէ վրաս].
28.— [ուստի] հեռուները [կը թափառիմ արձակադաշտի վրայ].
29.— ի՞նչպէս կրնամ լռ[ել? ի՞նչպէս կրնամ հանդարտիլ].

(87) Տես Ancient Near Eastern Texts, James B. Pritchard, էջ 91։
(88) Նոյն, անդ։

digitised by A.R.A.R.@

30.— բարեկամս, զոր կը սիրէի, [հողի վերա]ծուած է.
31.— ես (ալ), իրեն նման, պիտի չքնա- [նա՞մ և չարթննամ ցմիշտ]»։
32.— Գիլգամէշ (տակաւին) ըսաւ անոր՝ [Ուրշանաբիին].
33.— «Հիմա, Ուրշանաբի, ո՞րն [է ուղին դէպի Ուտնափիշտիմ],
34.— որո՞նք են անոր ցուցանիշերը, տուր ինծի, ո՛հ, տուր ինծի [անոր ցուցանիշերը].
35.— եթէ կարելի է՝ ծովը պիտի կտրեմ, (բայց) եթէ անկարելի է՝ [պիտի թափառիմ արձակադաշտի վրայ]»։
36.— Ուրշանաբին ըսաւ անոր՝ [Գիլգամէշ]ին.
37.— «Քու ձեռքերը, ո՛վ Գիլգամէշ, քեզի արգելք հանդիսացան [քու ծովը կտրելուն].
38.— (որովհետև) քանդեցիր Քարեղէն Առարկաները ...
39.— Քարեղէն Առարկաները փճացած են, ... Ուրնուն չէ ....
40.— Առ տապարը [քու ձեռքը], ո՛վ Գիլգամէշ,
41.— իջիր անտառը և [կտրէ հարիւր քսան] ձող, իւրաքանչիւրը վաթսուն կանգուն,
42.— դիր կուպր և օղամանեակներ(89) բեր»։
43.— Երբ Գիլգամէշ [լսեց] ասիկա,
44.— առաւ տապարը իր ձեռքը, [քա]շեց [սուրը իր գօտիէն],
45.— իջաւ անտառ և [կտրեց հարիւր քսան] ձողեր, իւրաքանչիւրը վաթսուն կանգուն,
46.— դրաւ կուպր և օղամանեակներ բերաւ։
47.— Գիլգամէշ և Ուրշանաբի (ապա) [նաւ] մտան.
48.— Նաւը արձակեցին ալիքներու վրայ և [արագացան].
49.— երրորդ օրը իրենց ուղևորութիւնը նոյնն էր ամսուայ մը և տասնըհինգ օրուայ (ուղևորութեան)։
50.— Այսպէս, Ուրշանաբի հասաւ [մահ]ուայ ջուրերը։

(89) Տես վերյիշեալ աղբիւրը, էջ 92։

ՍԻՒՆԱԿ ՉՈՐՐՈՐԴ

1.— Ուրշանաբի [ըսաւ] անոր՝ [Գիլգամէշին].
2.— «Աճապարէ, Գիլգամէշ, [առ ձող մը].
3.— (բայց) ձեռքդ թող չդպնայ մահուայ ջուրերուն [...]!
4.— Գիլգամէշ, առ երկրորդ, երրորդ և չորրորդ ձող մը.
5.— Գիլգամէշ, առ հինգերորդ, վեցերորդ և եօթներորդ ձող մը.
6.— Գիլգամէշ, առ ութերորդ, իններորդ և տասներորդ ձող մը.
7.— Գիլգամէշ, առ տասնըմէկերորդ (և) տասներկուերորդ ձող մը»։
8.— Հարիւր և քսան (անգամ մղելով), Գիլգամէշ սպառած էր ձողերը։
9.— Քակեց իր մէջքը ... [...].
10.— Գիլգամէշ հանեց [իր] զգեստները [...],
11.— իր ձեռքերով բարձրացուց առագաստը,
12.— Ուտնափիշտիմ հեռուն կը դիտէ.
13.— կ'ըսէ իր սրտին (և) [կը խօսի] (այս) խօսքերը.
14.— [երբ կը խորհրդակցի] ինքնիրեն հետ.
15.— «Ինչո՞ւ նաւուն [Քարեղէն Առարկաները] քանդուած են.
16.— և մէկը որ անոր տէրը չէ կը նաւարկէ [անոր վրայ].
17.— մարդը որ կու գայ իմիններէն չէ ... [...].
18.— Նայեցայ, բայց ոչ ... [...].
19.— Նայեցայ, բայց ոչ ... [...].
20.— Նայեցայ, բայց [...].

Սիւնակին մնացեալ մասը փշրուած է։ Գիլգամէշ կը հանդիպի Ուտնափիշտիմին, որ իրեն կ'ուղղէ նոյն հարցումները զորս գինետան աղախին Սիդուրին և Ուրշանաբի մակուկավարը ուղղած էին իրեն։ Գիլգամէշ կը պատասխանէ Ուտնափիշտիմին նոյն խօսքերով. —

[Գիլգամէշ ըսաւ անոր՝ Ուտնափիշտիմին].

«[Ուտնափիշտիմ, իմ այտերը պիտի չհիւծէին (և) իմ դէմքը չվհատէր]. ...

ԱՆՈՒՇԱՒԱՆ ՎՐԴ. ՋՂՋԱՆԵԱՆ

(Շարունակելի՝ 14)

digitised by A.R.A.R.@